

«ՀԱՅ ԿՆՈՋ ՉԱՅՆԻ» ՔՆՆԱԴԱՐԱՆ

(Նամակ խմբագրութեան)

«Հայ կնոջ ձայնը» վերնագրով յօդուածը *) սառսուռ է պատճառել «Արարատի» քննադատ Կ. Վ.-ին եւ ահա նա ամբողջ երեք ու կէս երես է էջրել, որպէսզի ցոյց տայ, թէ այդ յօդուածը ո՛րքան վատ, ո՛րքան վնասակար մտքեր է պարունակում իր մէջ **):

Դժբախտաբար Կ. Վ. թիւրիմացութեան զոհ է դարձել. նա անուշադիր է թողել յօդուածի հիմնական գաղափարը, սխալ է հասկացել նրա մէջ արծարծուած մտքերը եւ հէնց այդ պատճառով էլ երեւակայական երկիւղի մէջ է ընկել: Միանգամայն այնտեղի երկիւղ...

Քննելով կնոջ կատարած բաղմակողմանի դերը ընտանեկան կեանքում, մենք ի միջի այլոց կանգ ենք առել տնային տնտեսութեան վրայ, մատնանիշ ենք արել, որ խոհարարութեան համար էլ մասնագիտական պատրաստութիւն է հարկաւոր:

—«Եթէ ամեն մի տնտեսուհի ունենար մասնագիտական հասկացողութիւն, ասել ենք մենք (Մուրճ, № 2, եր. 181—182), նա անշուշտ կը նկատէր ու կը հասկանար այն բոլոր խարդախութիւնները, որ կատարում են խանութպանները կաթի, սուրճի, մրգեղէնների, մսի եւ այլ նիւթերի վերաբերմամբ... Ամենանպատակայարմարն այն կը լինի, որ խոհարարական արձեստը յանձնենք յատուկ մասնագէտների: Հարկաւոր է, որ *ամեն մի կին* անպատճառ ջբաղուի դրանով: Եթէ նա ընդունակ է, թող իր ոյժերը զործադրէ այլ ասպարէզում, որտեղ որ աւելի օգտակար կարող է լինել»...

Իսկ Կ. Վ. դրանից եզրակացնում է, որ մեր կարծիքով «ամուսնու եւ երեխաների համար կերակուր պատրաստելը ստորութիւն է» (Ար. № 5, եր. 461):

*) Տես «Մուրճ», 1093, № № 1—2:

**) Տես «Արարատ», 1903, № 5:

Նա մեր յօղուածի միւս կէտերն էլ վնասակար է համարում, ուստի վրդովուած բացականչում է. «Պէտք է հասկանանք վերջապէս, որ շատ բան կենսական խնդիր լինելով Եւրոպայում, մեր մէջ լոկ հարցասիրութեան առարկայ է: Այնտեղ, ուր դեռ անամուսին եւ անգործ կանանց լեզիօններ չեն ստեղծուել, ուր գործարանական կեանք չը կայ, մեծամեծ քաղաքներ չկան—եւելի իդէալական գոյներով պատկերացնել այն դրութիւնը, երբ բազմաթիւ ընտանիքներ մի ընդհանուր խոհանոց կ'ունենան, մայրերն իրանց որդեց մանկական պարտէզ կ'ուղարկեն ու իրանք գործի կերթան—եւ այլն—կնշանակէ միայն կարծ մագերով, ծխախոտը բերանին, բարձրաձայն քրքջող, իմաստակ, պարապ, անհաճոյ էակների թիւը բազմացնել...» (Արար. եր. 461):

Թող ընթերցողն ինքը դատէ, թէ որքան հետեւողականութիւն եւ լրջութիւն կայ այդ տողերի մէջ, իսկ մենք միայն մի հարց կը տանք. ուրեմն ի՞նչ անել: «Մեզ զբաղեցնող միակ լուրջ խնդիրը կանանց կրթութիւնը պէտք է լինի», պատասխանում է Կ. Վ.: Շատ լաւ. բայց մի՞թէ կրթութեան հարցը կարելի է բաժանել տնտեսական հարցից: Մի՞թէ իսկապէս կրթուած օրիորդը թոյլ կը տայ, որ իրան վաճառեն իբրեւ ապրանք, վերցնելով ձեռնտու գլխազին (բաշլը), ինչպէս այդ անում են այժմ մեր զիւղերից շատ շատերում, կամ հարուստ բաժինքով զրաւեն փեսայացուներին, ինչպէս սովորութիւն է դարձել քաղաքներում: Մի՞թէ իսկապէս կրթուած կինը կը համաձայնի մնալ անգործ, երբ իր շուրջը ետում է կեանքը, երբ այնքան բազմաթիւ ու բազմազան են գործունէութեան ասպարէզները: Մի՞թէ նա թոյլ կը տայ նայելու իր վրայ իբրեւ մի խաղալիքի, իբրեւ մի զուարճութեան առարկայի: Մի՞թէ նա աշխատանքի խելացի բաժանում չի մտցնէ տնային տնտեսութեան մէջ, մի՞թէ չի պաշտպանէ իր անհատական ազատութիւնն ու տնտեսական անկախութիւնը: Ուրեմն էլ ինչո՞ւ է վրդովուում Կ. Վ., երբ մենք էլ նոյն բաներն ենք ցանկանում, թէեւ բոլորովին այլ կերպ ընդունելով հարցը: Կ. Վ. կարծիքով կարելի է առանց «տնտեսական անկախութեան» էլ զարկ տալ կանանց կրթութեանը, իսկ մենք կարծում ենք, որ խօսքեր ու ցանկութիւններ յայտնելով գործ առաջ չի գնայ, հարկաւոր են շօշափելի քանքեր, դրական միջոցներ. կանայք պէտք է ունենան սեփական աշխատանք, նիւթական միջոցներ, որպէս զի տնտեսապէս եւ բարոյապէս տգամարդկանց հաճոյքից կախուած չը լինին եւ կարողանան առաջ տանել իրանց ձգտումներն ու պահանջները, որոնց մէջ կրթութեան հարցը գլխաւոր տեղն է բռնում *): Եւ ի հարկէ, այդ բոլորը կը կատարուի ոչ թէ, յանկարծակի,

*) Ի դէպ. Կ. Վ. այնքան մանրակրկիտ քննադատ է, որ անուշադիր չէ թողել մեր յօղուածի մէջ սպրդած նոյն իսկ մի քանի տառասխալները: Նա ասում է, որ Կեօնիզսբուրգ չէ, այլ Կեօնիզսբերգ, Էրլանգին չէ, այլ Էրլանգէն, և այլ դուռ տպագրական սխալներ... Մեր ձեռագրում յիշուած է եղել Կիլ (և ոչ՝ Կեօլն), որտեղ և համալսարան կայ և ուսանողուհիները 8. 4.

մի որեւէ կախարդական զաւազանի զօրութեամբ, այլ հետզհետէ, աստիճանաբար, այնպէս որ միանգամայն աւելորդ է ասել, թէ մեզանում դեռ վաղաժամ եւ վնասակար է այդպիսի հարցեր շօշափելը:

Սակայն այդ դեռ բոլորը չէ: Կ. Վ. այնքան հեռու է գնում, որ ուզում է «Արարատի» ընթերցողներին համոզել, թէ մենք «սովորեցնում ենք կնոջը (ասիացի կնոջը), որ նա անարգէ ընտանեկան յարկի նուիրականութիւնը, ամուսնական կեանքի սրբութիւնը»: Ինչպէ՞ս, ո՞րտեղ: Մի՞թէ խօսել կնոջ տնտեսական աննախանձելի դրութեան մասին, ցոյց տալ թէ կինը որքան մեծ դեր կարող է խաղալ իբրեւ մայր, տնտեսուհի եւ դատարարկունհի, իբրեւ ընտանիքի եւ հասարակութեան անդամ, եթէ նախապատրաստուած լինի եւ ունենայ ազատութիւն—դա կը նշանակէ անարգանք ներշնչել դէպի «ընտանիկան յարկի նուիրականութիւնը»: Մի՞թէ յիշել ամուսնութեան այժման վատ կարգերը եւ նրանցից առաջացած վնասակար հետեւանքները—կը նշանակէ խախտել «ամուսնական կեանքի սրբութիւնը»: Երբէք: Մենք ամեն բանից բարձր ենք դասում ընտանիքի եւ ամուսնութեան սրբութիւնը եւ հէնց դրա համար է, որ ցանկանում ենք, որպէս զի այդ սրբութեան հիմքը կազմող կիներն ունենայ իր արժանավայել տեղն ու դիրքը:

Եզրափակելով մեր խօսքը, չենք կարող չը յիշել Կ. Վ. քննադատութեանը վերջաբանը, որ բաւական բնորոշ է: «Մարդկութեան ուժերի զուր վատնումն կը լինէր, ասում է նա, եւ այլասեռումն առաջ կը բերէր, եթէ կանայք սկսեն տղամարդու կոպիտ եւ չոր աշխատանքներով զբաղուել»: Մեզ համար էլ, ի հարկէ, շատ ցանկալի չէ, որ կինը կոպիտ աշխատանքով պարագլի, բայց երբ կարիքն ստիպում է, այն ժամանակ պէտք է այդ քայլն էլ անել առանց վախենալու վնասից կամ այլասեռումից... Եթէ ֆիշտ լինէր Կ. Վ. կարծիքը, այն ժամանակ Եւրոպան ու Ամերիկան վաղուց արդէն այլասեռուած պիտի լինէին, որովհետեւ այնտեղ «չոր» աշխատանքով պարագող բանտրուհիները լեզէոններ են կազմում. այլասեռուած պիտի լինէր եւ մեր գիւղական ազգաբնակչութիւնը, որովհետեւ մեր գեղջկուհիները միշտ մասնակից են տղամարդկանց «կոպիտ» եւ «չոր» աշխատանքին՝ ցանքսի, հունձի, կալոցի եւ այգեկութի ժամանակ: Բայց ինչպէս յայտնի է, իրականութեան մէջ այդպէս չէ, որովհետեւ Եւրոպայում ու Ամերիկայում հասարակական կեանքը անընդհատ առաջադիմում է, կանանց վիճակը համեմատաբար աւելի ու աւելի բարելոքում է եւ նրանց ազատագրական շարժումը բաջալերութեան արժանանում, իսկ մեր գեղջկուհիները թէ ֆիզիկապէս եւ թէ բարոյապէս համեմատաբար աւելի բարձր են, քան թէ քաղաքացի այն փափկասուն կանայք, որոնք Կ. Վ.-ի ցանկութեան համեմատ իրանց քնքուշիկ ձեռքերը երբէք չեն զարկում չոր աշխատանքի:

Ո՛չ, չոր աշխատանքը չէ վնաս եւ այլասեռում առաջացնողը, այլ անգործութիւնն ու փափկասիրութիւնը: Թող, ուրեմն, աշխատինակայք՝

ինչ ասպարէզում էլ ուզում է լինի, միայն թէ այդ աշխատանքը ունենայ արդար ու ազնիւ հիմունքներ: Կրկնում ենք՝ թող աշխատին, որովհետեւ միայն աշխատանքն է ազնւացնում մարդու մարմինն ու հոգին, միայն նա է կանանց փրկութեան, ազատութեան եւ բարօրութեան իսկական ուղին...

ՏԻԿԻՆ ՀՐԱՆՈՅԸ

Պ Ա Տ Ա Ս Ի Ա Ն Ն Ե Ր

ՍԻՄՅԵՐՈՊՈՂ. Հ. Փ.—Երբ կ'ունենանք ազատ համար՝ կ'ուզարկենք: ՄԻԻՆԽԷՆ. Մ. Կ.—Ինչո՞ւ ոչինչ չէք գրում:

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

Երես	Մուրճի № 4-ում		
	տող	տպուած է	պիտի լինի
198 վ.	23	4—5 ը.	45 ը.
204 „	2	բարձր մետաղի	բարից մետաղի
206 „	3	Այս ըղհանուր	«Մուրճի» № 1-ում
			տպուած ընդհանուր
218 „	24	ստուծին ներշնչելով	ատելութիւն
			ներշնչելով
234 „	8	Սինոդը	Սենատը

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը յատուկ խնդրում է յօդուածագրերից զրկի պարզ, մանաւանդ թւերը, յատուկ անուններն ու օտար բառերը, և թերթի միայն մի երեսի վրայ:

2. 2'ընդունուած մեծ յօդուածները պահում են խմբագրատանը 6 ամիս: 2-եռագիրը յետ ստանալու համար պէտք է ուղարկել ճանապարհածախսը: Իսկ փոքր յօդուածներն ու բանաստեղծութիւնները չեն վերադարձնում:

3. Գրուածքների վարձատրութեան չափը որոշում է խմբագրութիւնը: Խմբագրութեան առանց պայմանների ուղարկուած ձեռագիրները համարում են անվճարելի:

4. Խմբագրութիւնը իրան է վերադառնում ուղարկուած յօդուածները փոփոխելու կամ կրճատելու իրաւունքը:

5. «Մուրճի» համարը չը ստացուելու դէպքում պէտք է խմբագրութեանը տեղեկութիւն տալ ռուսերէն գրուած ազգով (заявление) ոչ ուշ, քան յաջորդ համարի լոյս տեսնելը: Այդ տեղեկութեանը պէտք է կցել տեղական պոստային դրասենեակի հաւաստագիրը (удостоверение), որ ամագրի համարը չէ յանձնուած զանգատաւորին:

6. Խմբագրութեանը զանազան հարցումներով դիմող անձինք պէտք է պատասխանի համար ուղարկեն նամակադրու՜մ կամ պոստային բլանկ: